ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դարի կես – XX դարի սկիզբ), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 454 էջ:


ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(XVIII դարի կես – XX դարի սկիզբ)

ԵՐԵՎԱՆ
2010

ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչությունն այս տարի լույս է ընծայել ԳԱԱ իսկական անդամ, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, պ. գ. դ. Վլադիմիր Բարխուդարյանի՝ Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմությանը նվիրված ծանրակշիռ մի աշխատություն, որը նոր էջ է բացում ողջ աշխարհում սփռված հայ գաղթօջախների ուսումնասիրության մեջ: Միայն Ռուսաստանի հայ գաղթօջախներին նվիրված բազմաթիվ հետազոտություններ են կատարվել հայ և ռուս ուսումնասիրողների կողմից (Նոր Նախիջևան, Ղրիմ, Գրիգորիոպոլ, Հյուսիսային Կովկաս, Աստրախան), սակայն Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղթօջախների վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն դեռևս չկար հրապարակի վրա: Այդ բացը լրացնելու է գալիս բազմավաստակ գիտնականի աշխատությունը, որն ունի հույժ արդիական հնչեղություն: Այս տարի Պետերբուրգի հայ համայնքը նշում է իր սկզբնավորման 300-ամյակը. հավուր պատշաճի գնահատելով Պետրոս Մեծի ներդրումն այդ գործում՝ Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքի հայ և ռուս բնակչությունը նշում է նաև հայ գաղթօջախի ծանրակշիռ դերը: Ահա այդ հետնախորքի վրա առավել ակնհայտ է երևում պատմաբան գիտնականի կատարած գործի արժեքը: Ստվարածավալ այդ աշխատությունը բաղկացած է ներածությունից (Երկու խոսք), չորս գլուխներից, վերջաբանից (Վերջաբանի փոխարեն), հավելվածից և անձնանունների ու տեղանունների ցանկերից: Մեծ հետաքրքրությամբ է ընթերցվում առաջին գլուխը, որը նվիրված է Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների առաջացման գործընթացի վերհանմանը: Երեք ենթագլխից բաղկացած այս գլխում հանգամանորեն բացահայտվում է, որ դեռևս Վլադիմիր Մոնոմախի օրոք, Կիևյան Ռուսիայում, XII դարից սկսվել էին հայ գաղթականների հոսքը և տեղի հայ համայնքի ձևավորումը: Հենվելով ռուս և հայ պատմաբանների հաղորդած փաստերի վրա, օգտագործելով հին շրջանի տարեգրություններ և ժամանակագրություններ՝ աշխատության հեղինակը հավաստում է, որ XIV դարում Մոսկվայում արդեն ապրել են հայ վաճառականներ, որոնք մասնակցել են Նիժնի Նովգորոդի 1366 թ. առաջին տոնավաճառին: Համադրելով հայ և ռուս գիտնականների հաղորդած տեղեկությունները՝ նա ընթերցողին է ներկայացնում արտակարգ հետաքրքիր փաստեր մոսկովյան ռուսական պետությունում գործող այլ երկրների հայազգի դիվանագետների գործունեության վերաբերյալ: Մոսկվայի հայ համայնքի ձևավորման գործընթացը շարունակվում է և առավել ուժգնանում XVII դ. II կեսից (1654 թ.), երբ ռուսական պետությունը, իրեն միացնելով Ուկրաինան, ակ-

տիվացնում է արևելյան քաղաքականությունը: Երկու մահմեդական երկրների՝ Պարսկաստանի և Թուրքիայի միջև բաժանված Հայաստանի հայությունը, առանձնապես վաճառականներ, հայացքը հառում էր Ռուսաստանին, որն ուներ առևտրի լայն հնարավորություններ, հարուստ ու մեծ շուկա, որտեղ բացասվում էր կրոնական ու ազգային ճնշումը: Առևտրականների հետ միասին Մոսկվան դեպի իրեն էր ձգում նաև արհեստավորների, թարգմանիչների, դիվանագետների, Հայաստանի ազատագրության խնդիրներով շահագրգռված հասարակական-քաղաքական և հոգևոր գործիչների: Աշխատության մեջ բազմաթիվ են հետաքրքիր փաստերը Ռուսաստանում արտաքին հարաբերություններով զբաղվող բոյարական դումայի հետ առնչվող հայերի գործունեության վերաբերյալ, ռուսական ցարերին նրանց մատուցած և պատմության մեջ հավերժացված թանկարժեք նվերների, անգնահատելի գանձերի մասին: Ռուսական ցարերի և հայ գործիչների (արվեստագետների, մտավորականների, նկարիչների) փոխադարձ համաձայնությամբ, Մոսկվայում աստիճանաբար ստեղծվում է ծանրակշիռ մի համայնք, որը զարկ է տալիս ոչ միայն առևտրին, այլև գորգագործությանը, մետաքսագործությանը, արվեստին (գեղանկարչությանը): Մոսկվայի հայ գաղթօջախի, հայ համայնքի ձևավորման գործընթացն ավարտվում է հայ եկեղեցու և ուսումնական հաստատության կառույցով և ստեղծումով. խորությամբ է մեկնաբանված հայ ժողովրդի, հայ համայնքների գործելակերպը, որն արժանի է բարձր գնահատականի: Հայը որտեղ էլ լինի, երկու կառույց է ձեռնարկում՝ եկեղեցի ու դպրոց: Դա հայի ազգային ամենակարևոր հատկանիշն է: Մոսկվայում կառուցվեցին Ս. Խաչ և Ս. Հարության եկեղեցիները, բացվեց Լազարյան ճեմարանը, որը մեծ դեր խաղաց ողջ հայության կրթական գործում: Ուշագրավ է նաև Պետերբուրգի հայկական համայնքի ձևավորման գործընթացի բացահայտումը: 1703 թ. սկսված՝ քաղաքի կառուցումն արագ տեմպերով ավարտվում է, և 1712 թ. Պետերբուրգը դառնում է Ռուսաստանի մայրաքաղաքը: Այն արագ կառուցապատելու և բարեկարգելու նպատակով, Պետրոս Առաջինը արտոնություններ է շնորհում այնտեղ հաստատվողներին, որոնք ձեռնամուխ են լինում տարբեր ոլորտների զարգացմանը: Դարի առաջին քառորդին երկրի հյուսիսային մայրաքաղաքում արդեն գործում էին ուսումնական հաստատություններ (բացվում են ծովային ակադեմիան, հրետանային դպրոցը), իսկ 1725 թ.՝ Գիտությունների ակադեմիան: Նոր բարեկարգված մայրաքաղաքում արդեն 1714 թ. տեղի հայերը եկեղեցի կառուցելու թույլտվություն են խնդրում: Չնայած բազմաթիվ խնդրագրերին, նրանք թույլտվությունը ստանում են սոսկ 1740 թ.: Ռուս հոգևորականները խոչընդոտներ էին հարուցում հայ եկեղեցի կառուցելու համար, հայերի՝ առաքելական (ոչ ուղղափառ) դավանանքին պատկանելու պատճառով: Եթե չլինեին սահմանափակումները դավանանքի բնագավառում, ավելի մեծ կլիներ Պետերբուրգում բնակություն հաստատել ցանկացողների քանակը: Միայն Եկատերինա Երկրորդի գահ բարձրանալուց հետո կառավարական սենատը 1763 թ. հունիսին հատուկ հրամանագրով հայերին թույլատրեց եկեղեցիներ կառուցել: Դրա շնորհիվ հայերի թիվը Մոսկվայի և Պետերբուրգի գաղթօջախներում զգալիորեն մեծացավ: Տարբեր վայրերից (Ամստերդամ, Զմյուռնիա, Սպահան, Նոր Ջուղա) հայ վաճառականները թույլտվություն են խնդրում քաղաքում ապրելու համար: XVIII դ. 60-70-ական թվականներին վերջնականապես ձևավորվում է Պետերբուրգի՝ թվով փոքր, բայց խիստ կենսունակ հայ համայնքը:

Երեք ենթագլխից բաղկացած երկրորդ գլուխը նվիրված է ռուսական մայրաքաղաքների հայ համայնքների ներքին կյանքի քննարկմանը: Օգ-

տագործելով մեծաքանակ արխիվային վավերագրեր (առանձնապես Մատենադարանի կաթողիկոսական դիվանի տարբեր ֆոնդերի փաստաթղթեր)՝ հեղինակը քննարկում է երկու համայնքների հոգևոր հոգաբարձության գործունեության և նախարարների խորհրդի որոշումով (1883 թ.) երկու քաղաքներում հայկական համայնքի և եկեղեցիների ունեցվածքը տնօրինելու համար ստեղծված եկեղեցական խորհուրդների իրավունքների հարցերը: Արտաքուստ հոգևոր իրավասություններով օժտված այդ մարմինները փաստորեն իրականացրել են աշխարհիկ, ընդգծված ազգային գործառույթներ: Արտակարգ հետաքրքրությամբ են ընթերցվում եկեղեցական խորհուրդներում տարբեր ժամանակամիջոցներում հայրենասեր գործիչների ծավալած գործունեության փաստերը: Բացահայտվում են եկեղեցական խորհուրդների եկամուտների գոյության զանազան միջոցներ, կազմված են ռուսաստանյան մայրաքաղաքների հայկական եկեղեցիների և դրանց խորհուրդների եկամուտների ստեղծման ու ծախսերի աղյուսակները: Քննարկման և վերլուծության առարկա են դառնում նաև հայկական երկու գաղթօջախների բնակչության բնական աճի, տեղաշարժերի, արհեստական ճանապարհով կատարվող ներհոսքի հետևանքների խնդիրները: Այդ բոլորը համադրելով Ռուսական կայսրության տարածքում գտնվող մյուս գաղթօջախների հայ բնակչության թվաքանակի հետ՝ պարզվում է, որ մայրաքաղաքների հայությունն ավելի փոքրաթիվ էր, որովհետև բնական աճը 6,5 տոկոսից չէր անցնում, իսկ աճն ընդհանրապես նկատվում էր դրսեկ բնակչության հաշվին: Հետաքրքիր փաստեր են բերվում ռուսական այլ գաղթօջախների մայրաքաղաքներում հաստատված հայ գործարարների գործունեության վերաբերյալ, որը հիմնականում ընթանում էր երկու ուղղությամբ՝ առևտուր և թեթև արդյունաբերություն:

Ժամանակի ընթացքում երկու գաղթօջախները դառնում են կրթական, գիտական, մշակութային կենտրոններ և դեպի իրենց են ձգում այդ բնագավառների նշանավոր անհատներին: Դրա շնորհիվ երկու մայրաքաղաքները միաժամանակ դառնում են հայ-ռուսական հարաբերությունների սերտացման կենտրոններ. տեղի նշանավոր գործիչները հետամուտ են լինում օտարի լուծը թոթափելու, հայրենի երկիրն ազատագրելու գաղափարին: Աշխատության մեջ հանգամանորեն ներկայացվում են հայ գործիչների ռուսական կողմնորոշման, Ռուսաստանի օգնությամբ և հովանավորությամբ հայկական պետականությունը վերականգնելու ծրագրերը (Մովսես Սարաֆյան, Հ. Արղության և այլք): Այդ հարցերը քննարկվում են աշխատության երրորդ գլխի՝ «Քաղաքական մաքառումների քառուղիներում» բովանդակալից խորագիրը կրող առաջին ենթագլխում: Մեծ կարևորություն են ներկայացնում համայնքների նշանավոր գործիչներ Լազարյանների, ռուսահայ թեմի առաջնորդ Հ. Արղությանի և վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցու՝ այդ ուղղությամբ ծավալած գործունեության տարբեր դրվագների բացահայտումն ու արժևորումը: Լավատեղյակ լինելով Անդրկովկասի (առանձնապես Ռուսաստանի տիրապետության տակ անցած Արևելյան Հայաստանի) ժողովրդագրական իրավիճակին՝ հեռավոր Պետերբուրգում և Մոսկվայում ապրող հայ հայրենասերներն առաջինը բարձրացրին ներգաղթի կազմակերպման և պարսկական լծից ազատագրված տարածքները հայերով վերաբնակեցնելու խնդիրները՝ բարձրաստիճան ցարական պաշտոնյաներին ստիպելով ընդունել հայանպաստ որոշումներ:

Մամուլից բազմաթիվ նյութեր և արխիվային հարուստ փաստաթղթեր օգտագործելով՝ հեղինակն ընթերցողին է մատուցում ռուսական մայրա-

քաղաքների հայության հասարակական կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ հետաքրքիր փաստեր («Հայրենասերների միություն» կազմակերպության, «Ազատության ավետաբեր» պաշտոնաթերթի և նրանց հրատարակած թռուցիկների մասին): Հայկական այդ գաղթօջախները հայրենասիրական արտակարգ գործունեություն են ծավալում 1890-ական թթ. Արևմտյան Հայաստանում մոլեգնող աբդուլհամիդյան կոտորածներից իրենց կյանքը փրկած հայ գաղթականներին օգնելու խնդրում: Կապ պահպանելով Ամենայն հայոց կաթողիկոսի, Կ. Պոլսի հայոց պատրիարքի հետ՝ մայրաքաղաքների հայ համայնքները, նրանց եկեղեցական խորհուրդները հանգանականությամբ պատկառելի գումարներ են հավաքում՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանի միջոցով Արևմտյան Հայաստանում որբանոցներ ստեղծելու (Մշո Ս. Կարապետի, Առաքելոց վանք), գյուղերում նախակրթարաններ բացելու նպատակով: 1903 թ. դեկտեմբերին Կ. Պոլսի պատրիարքը Ս. Աբամելիք-Լազարյանին տեղեկացնում է ստացված գումարի գործածության, դպրոցներին, որբանոցներին, արհեստանոցներին հատկացված գումարների մասին: Անընդհատ կապեր պահպանելով Մայր հայրենիքի հետ՝ ռուսական երկու համայնքներն անմիջականորեն արձագանքում են իրենց առնչվող բոլոր հրատապ խնդիրներին (հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 13-ի օրենքին, Անդրկովկասում հրահրված հայ-թաթարական ընդհարումներին, հոգեհանգիստ է կատարվում ազատագրական շարժման նվիրյալ Քրիստափոր Միքայելյանի հիշատակին): Երկու մայրաքաղաքների հայությունն առանձնապես ակտիվ գործունեություն ծավալեց Առաջին աշխարհամարտի տարիներին, երբ ողջ աշխարհի հայության շրջանում մեծ շարժում սկսվեց արևմտահայ փախստականներին օգնելու համար: Հայոց վեհափառ հայրապետ Գևորգ Ե-ի և Պետերբուրգի եկեղեցական խորհրդի նախաձեռնությամբ հավաքվեց պատկառելի մի գումար և ուղարկվեց Էջմիածին: Նույնիսկ այդ կացության մեջ ռուսական երկու համայնքների հայությունն աչքաթող չի անում հայ երեխաների ուսուցման գործը կազմակերպելու խնդիրը, կապ է պահպանում «Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միության», տարբեր կազմակերպությունների հետ և ցուցաբերում անհրաժեշտ օգնությունը: Այդ ծանր տարիներին Մոսկվայի հայկական կոմիտեն սկսեց հրատարակել «Армянский вестник» հանդեսը, որի խմբագիր-հրատարակիչը անվանի պատմաբան, հրապարակախոս Ալեքսանդր Ջիվելեգովն էր: Ռուսական մայրաքաղաքների հայ գաղթօջախների օգտաշատ գործունեության արտահայտությունն էր կառավարության թույլտվությամբ Պետերբուրգում հայ փախստականների հարցերով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների համագումարը, որտեղ քննարկվեցին գաղթականների և փախստականների հետ կապված տարբեր հարցեր: Գործնական լուծում տալով բազմաթիվ խնդիրների՝ համագումարը մեծ գործ կատարեց նաև ռուս հասարակայնությանը հայ ժողովրդի մեծ ողբերգությանը հաղորդակից դարձնելու համար:

Հեղինակն արտակարգ խորությամբ և հմտությամբ վերլուծում է հայ-ռուսական հասարակական կապերը, քննում գաղթօջախների հայության առանձնահատկությունները, ընդգծում նրանց ամենակարևոր առանձնահատկությունները. առաջին՝ հայը պարտավոր է լինել իրեն հյուրընկալող երկրի իսկական քաղաքացի, երկրորդ՝ հավատարիմ մնալ իր ազգին ու ավանդույթներին, չմոռանալ մայրենին, օգտակար լինել հայրենիքին: Գաղթաշխարհի հայության այդ էական հատկանիշները պարտադիր են բոլորի համար: Աշխատության անխոնջ հեղինակը բազմաթիվ հետաքրքր-

քիր, նաև սակավ հայտնի փաստերով ապացուցում է այդ իրողությունը: Խիստ ուշագրավ է «Մշակույթ» խորագրով գլուխը՝ բաղկացած «Կրթություն», «Գիտություն», «Գրականություն և մամուլ», «Արվեստ» ենթագլուխներից: Անվարան կարելի է նշել՝ այնքան շատ են նոր փաստերը, մեկնաբանությունները, բացառիկ հետաքրքրություն ներկայացնող եզրակացությունները, որ դրանք մի փոքր ընդլայնելու դեպքում կարող էին դառնալ առանձին աշխատություններ: Ընթերցողը կլանված կարդում է բոլոր բաժինները, ցանկանում մտապահել հետաքրքիր փաստերի և դեպքերի գոնե փոքր մասը: Տրվում են մայրաքաղաքների մշակութային կյանքին առնչվող և այլ կարևոր իրադարձությունների մեկնաբանություններ: Ռուսական մայրաքաղաքների մշակութային, կրթական-գիտական գործիչները իրենց նպաստն են բերել ոչ միայն Արևելյան Հայաստանի, այլ նաև Արևմտյան Հայաստանի կրթական-լուսավորական աշխատանքներին: Կ. Պոլսի պատրիարքը, Աղթամարի, Ս. Կարապետի և Վարագա վանքի վարժարանները, Վանի Երամյան, Կեդրոնական, Սանդխտյան իգական, Էրզրումի Սանասարյան վարժարանները մշտապես զգացել են Պետերբուրգի և Մոսկվայի հայ համայնքների օգնությունն ու աջակցությունը: Մեծ էր նրանց ներդրումը նաև հայագիտական բարձրարժեք աշխատությունների, հայ պատմիչների գործերը հրատարակելու ասպարեզում: Ռուսական մայրաքաղաքների հայ համայնքները դարձան ազգային մշակույթի ավանդները իրենց մեջ ամրապնդողները և զարգացնողները, միևնույն ժամանակ ծավալեցին երկու տիպի համարժեք գործունեություն. առաջին՝ հայ մշակույթը ռուսական և համաշխարհային հասարակությանը ներկայացնելու և, երկրորդ, ռուսական ու համաշխարհային մշակույթի, գիտության նվաճումները, ձեռքբերումները հայ ժողովրդին ծանոթացնելու գործում:

«Վերջաբանի փոխարենՁ խորագրով հատվածում աշխատության հեղինակն ի մի է բերում երկու մայրաքաղաքների հայ համայնքների գործունեությունը, ընդգծում և գնահատում նրանց կատարած գործը: Աշխատությանը կցված են նաև արխիվային վավերագրեր Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի N 399 ֆոնդի տարբեր գործերից և մի ընդարձակ վավերագիր Ռուսաստանի պետական պատմական արխիվի N 821 ֆոնդից: Աշխատությունն ավարտվում է անձնանունների և տեղանունների ցանկերով: Ափսոսանքով ենք նշում, որ աշխատության վերջում բացակայում է օգտագործված արխիվների, սկզբնաղբյուրների, գրականության և պարբերական մամուլի ցուցակը: Հեղինակն օգտագործել է պատկառելի քանակությամբ արխիվային փաստաթղթեր, սկզբնաղբյուր ժողովածուներ, պատմական աշխատություններ և պարբերական մամուլ: Ճիշտ է, դրանք նշված են աշխատության էջերի տողատակերում, բայց ընդհանուր հայտարարի բերված ցուցակը ընթերցողին կօգնի արագ կողմնորոշվելու: Աշխատությունն ունի արդիական և քաղաքական հնչեղություն: Այժմ, երբ ավելի բազմամարդ են դարձել ռուսական գաղթօջախները, առավելապես Մոսկվայի և Պետերբուրգի հայկական համայնքները, անհրաժեշտ է այս աշխատության ռուսերեն հրատարակությունը. այն առավել կնպաստի հայկական համայնքների գործունեության արժևորմանը, ինչ-որ ձևով կօգնի նրանց՝ ազգայինը պահպանելու կարևոր հիմնախնդրում:

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Է. Ա.
Պատմական գիտությունների դոկտոր